ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2020թ. N 4-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով _ կողմ, _ դեմ, _ ձեռնպահ, Գորայք համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքում 2020 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքում 2020 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Գորայք համայնքի ավագանու անդամներ՝

	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Վ. Աբգարյան			
Ա. Անտոնյան			
Ն. Ավետիսյան			
Մ. Թադևոսյան			
Վ. Թորոսյան			
Հ. Հակոբյան			
Մ. Սարգսյան			

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի

Գորայք համայնքի ղեկավար՝ **Ա. Աղաջանյան**

2020թ. հունվարի 30

Գ. Գորայք